ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՄԵԼԹ ՄԵԹԱԼ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/125 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Աղբամաններ ձուլվածքով, դույլով: Պատրաստված է երեք երկաթյա անկյունակով 35մմx35մմ Φ500 (ներսի տրամագիծը) հավաքված երկաթյա հարթ ձողով 40 մմ x 3 մմ, զոդված: Հարթ ձողերի ներքևի մասը 90մմ՝ ծռված և Φ7 անցքով գետնին ամրացնելու հնարավորությամբ: Վերևի մասում ամբողջ շրջանակով տեղադրված թուջե ձուլվածք Φ100մմ 12 հատ պատկերված Հայկական զարդանախշով: Զարդանախշերից ներքև ամբողջ շրջանակով ամրացված փայտե ձողեր 23 հատ:Ոտքի բարձրությունը 5սմ: Երկաթյա կառուցվածքը պատված նախաներկով և ներկված են սև գույնի: Փայտյա ձողերի չափերը 500 մմ x 60 մմ x 25մմ: Փայտը հաճարե, չոր: Գույնը դեղին–ծիրանագույն և/կամ շագանակագույն /համաձայնեցնել պատվիրատուի հետ/, լաքապատված տախտակամածային լաքով: Աղբամանի բարձրությունը 670 մմ: Արտադրողը պարտավոր է կատարել սպասարկում 1 տարի ժամանակով (գարնանը, ամռանը, աշնանը՝ 3 անգամ): Թարմացնել գույները, անհրաժեշտության դեպքում ամբողջությամբ ներկել: Փայտյա մասերը բնակլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած թերությունների դեպքում վերականգնել լաքապատված մակերեսը: Տեղափոխումն և տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Ըստ պատվիրատուի ներկայացրած հասցեների (Երևան քաղաքի տարածքում): Պատվիրատուի պահանջով (քաղաքային միջոցառումների, համերգների ժամանակ) կատարողը պարտավոր է իր միջոցների հաշվին ժամանակավորապես ապամոնտաժել տվյալ տարածքի աղբամանները, տեղափոխել իր մոտ և ավարտից հետո նորից տեղադրել նույն տեղում: Տեղադրումն իրականացնել վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման որևէ աշխատակցի ներկայությամբ, տեղադրումն իրականացնելուց հետո պատվիրատուին

	ներկայացնել տեղադրված գույքի լուսանկարը՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով (պայմանագիրը կնքելուց հետո Էլեկտրոնային հասցեն կտրամադրվի վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանմանը և մատակարարին): Աղբամանի որևէ անտեսանելի մասում պետք է լինի դաճված “Կենտրոն 2023” բառերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

МЕЛТ МЕТАЛ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/125 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	